



**ՀԱՉԱՐԱՄՅԱԿԻ
ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐ
ՀԻՄՆԱԳՐԱՄ-ՀԱՅԱՍՏԱՆ**

Մամլո հաղորդագրություն

23 մարտի, 2009

Աշխատանքային հանդիպում Ջրօգտագործողների ընկերությունների հետ

Հազարամյակի Մարտահրավեր Հիմնադրամ-Հայաստան ծրագրի Ռոռզման կառավարման կառույցների Ինստիտուցիոնալ հզորացում բաղադրիչն իրականացնող միդերլանդական «Եվրոկոնսալթ Մոթ Մաքրոնալթ» ընկերությունը կազմակերպել էր աշխատանքային հանդիպում, որի նպատակն էր ներկայացնել բաղադրիչը հիմնական շահառուներին: Աշխատանքային հանդիպման ժամանակ ներկայացվեցին խորհրդատուի մինչ օրս կատարած աշխատանքները, ինչպես նաև ծրագրի հետագա գործունեության պլանը, տրամադրվեց տեղեկատվություն Հայաստանում գրանցված 52 ՋՕԸ-երի և 3 Ջրառ ՓԲԸ-ների հետ մինչ օրս տարված աշխատանքի, այդ թվում՝ դրանց կարիքների և կարողությունների գնահատման և Կառավարման Բարելավման Պլանների մշակման վերաբերյալ: Հանդիպմանը հրավիրված էին Կառավարության ներկայացուցիչներ, բոլոր ՋՕԸ-երի և Ջրառ ՓԲԸ-ների ղեկավարները:

Միջոցառմանը ողջույնի խոսքով հանդես եկան ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի Գլխավոր գործադիր տնօրեն Արա Հովսեփյանը, ՀՀ Տարածքային կառավարման նախարարության Ջրային տնտեսության պետական կոմիտեի նախագահ Անդրանիկ Անդրեասյան: Ռոռզման կառավարման կառույցների Ինստիտուցիոնալ հզորացում բաղադրիչը ներկայացրեց «Եվրոկոնսալթ Մոթ Մաքրոնալթ» ընկերության մասնագետ Օննո Սխափը:

Ինստիտուցիոնալ հզորացում բաղադրիչի հիմնական նպատակն է՝ ուսուցման և տեխնիկական աջակցության միջամտություններով, զարգացնել ռոռզման կառավարման կազմակերպությունների կառուցվածքային և տեխնիկական կարողությունները, ապահովելու համար վստահելի և անխափան ջրամատակարարում, խրախուսելու ջրօգտագործողների սեփականության զգացումը ջրամատակարարման համակարգի նկատմամբ, ստեղծելու նախապայմաններ ռոռզման համակարգի տեխնիկական և ֆինանսական կայունության համար:

Ռոռզման կառավարման կառույցների Ինստիտուցիոնալ հզորացում բաղադրիչի և ՀՄՀ-Հայաստան ծրագրի վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվության համար խնդրում ենք այցելել՝

www.mca.am

###

Հազարամյակի մարտահրավեր հիմնադրամ - Հայաստանը (ՀՄՀ-Հայաստան) պետական ոչ առևտրային կազմակերպություն է, որը ստեղծվել է ՀՀ կառավարության կողմից և պատասխանատու է Հազարամյակի մարտահրավեր կորպորացիայի ու ՀՀ կառավարության միջև կնքված Համաձայնագրի թափանցիկ իրականացումը վերահսկելու համար: